

ները եւ վերադնահատումները:

Ժամանակ առ ժամանակ սակայն մեր մամուլի էջերուն մէջ երեւան կուգան պերճախօս նշաններ, որոնք ցոյց կուտան, թէ ո՞ր աստիճան խորն է եւ տենդային այն տաղնապը, որ համակեր է հայ քաղաքական ղեկավար շրջանները:

Այդ տեսակէտով առանձին ուշադրութեան արժանի է Հայաստանի հանրապետութեան անդրանիկ վարչապետ Յովհաննէս Քաջազնուների «Ի՞նչ պէտք է ըլլայ մեր ուղին» վերնագիրը կրող յօդուածաշարքը, որ տպուեցաւ այս տարի «Ճակատամարտ»ի մէջ եւ այնքան արժուէ հանեց իր շուրջը:

Տարակոյս չի կայ, որ մենք կ'ապրինք գաղափարական մեծ տաղնապ մը: Աննախընթաց շփոթութիւն մը տակնուվրայ կ'ընէ քաղաքական այն արժէքները, որոնք ղեռ երէկ շատ շատերուն անվիճելի կը թուէին: Կասկածի կամ նոյնիսկ բացարձակ ժխտման կ'ենթարկուին նշանաբաններ, սկզբունքներ, որոնք խանդավառներ են ամբողջ սերունդներ: Պետութիւն, անկախութիւն, ընկերավարութիւն, յեղափոխութիւն, — այս բոլոր գաղափարները վար կ'առնուին իրենց նախկին բարձր պատուանդաններէն եւ յաճախ ոտնակոխ կ'ըլլան: Կարծես գետինը կը շարժուի շատերու ոտքին տակ. ոչինչ՝ հաստատուն, աներկբայելի. ամէն ինչ՝ երեքուն, կասկածելի. ոչինչ՝ որոշ, տեւական, ամէն ինչ՝ տարտամ, անցողական: Մէկ խօսքով՝ ամէն ինչ դարձած է տարակուսանքի ու վէճի առարկայ:

Եւ հայ միտքը, իբրեւ հարազատ ու պերճախօս արտայայտիչը հայ ազգային խառնըլածքի եւ նկարագրի, այս անգամ ալ, ինչպէս միշտ, անյաղթելի մղում մը ցոյց կուտայ իյնալու ծայրայեղութեանց մէջ: Աղանդամուլ, մոլեռանդ, գրեթէ կրօնական շունչ մը կը զգացուի նոյնիսկ այն անհատներուն մօտ, որոնք զգաստութեան, իրապաշտութեան, չափաւորութեան քարոզը կ'ընեն:

Սխալ պիտի լինէր սակայն կարծել, թէ միայն մենք է որ կ'ապրինք գաղափարական այս խորը տաղնապը: Իրականին մէջ ան դուրս կ'ելլէ հայկական անձուկ շրջանակներէն:

Համայն մարդկութիւնը այսօր ծանր, աննախընթաց երկունքի մը մէջ է:

Վերջին ահեղ պատերազմը ցնցեր է հին աշխարհը իր բոլոր հիմքերուն եւ արժէքներուն մէջ: Քանդուած են ամբողջ երկիրներ. հրի ու սրի են մասնուած բազմամիլիոն ժողովուրդներ. մարդկային անթիւ զոհեր, անչափելի նիւթական կորուստներ՝ ամէն տեղ. մարդկային անյատակ եւ յարաճուն թշուառութիւն, սով, հիւանդութիւն, անստոյգ վիճակ՝ Արեւմուտքի եւ Արեւելքի մէջ. քաղաքական վերիվայրումներ, քաղաքացիական ներքին արիւնահեղ կռիւներ. պետութիւն պետութեան դէմ, ազգ ազգի դէմ, դասակարգ դասակարգի դէմ, անհատ անհատի դէմ. տընտեսական մեքենան՝ խախտուած ամենուրեք սպառնական չափերով. արտադրութիւնը՝ ինկած, առևտուրը՝ կանգնած կամ կրճատուած. անգործութիւն, անսպասելիութիւն՝ գրեթէ ամէն երկրի մէջ. սպառազէն, կէս-պատերազմական վիճակ ամէն կողմ. ամբողջ աշխարհը՝ նստած հրաբուխի մը վրայ, որ կրնայ պայթիլ ամէն ժամ, ամէն վայրկեան ե'ւ կործանել մարդկային ամբողջ քաղաքակրթութիւնը ու աւերակներու կոյտի վերածել ե'ւ այն բոլորը, որ տակաւին ազատ է մնացեր վերջին մեծ պատերազմի քանդող ու մահաբեր ձեռքէն:

Այս է ահա միջազգային կացութեան ընդհանուր պատկերը:

VII

«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ»

Կանգնած այս ծանր, արհաւիրալի կացութեան հանդէպ՝ համաշխարհային յեղափոխութեան շեփոքը կը հնչեցնեն հինգ տարիէ ի վեր ուս եւ ալյազգի բոլշեւիկները:

Միմիայն համաշխարհային ընկերվարական յեղափոխութիւնը կրնայ փրկել ժողովուրդները ներկայ տաժանելի վիճակէն, — կը քարոզեն անոնք, անդադար ու մոլեգին՝ խօսքով, գրչով, հուրով եւ սուրով:

Բոլշեւիկներու կարծիքով, համաշխարհային ներկայ տաղնապը կը բխի այն ահեղ դասակարգային պայքարէն, որ կը մղեն իբրբու դէմ մէկ կողմէն՝ բոլոր երկիրներու գործաւորները եւ միւս կողմէն՝ բոլոր երկիրներու բուրժուական դասերը: Ամբողջ աշխարհը,